Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, ԱԼ. ՍԱՖԱՐՅԱՆ, Լ. ՍԱՀԱԿՅԱՆ, *Օսմաներենի դասագիրք (խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյան), Ե., ԵՊՀ հրատ., 2016, 324 էջ:*



Հայաստանում օսմանագիտության զարգացման համար կարևորվում են բուհական դասընթացների անցկացումը, համապատասխան դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծումը: Այսօր հայ ուսանողի սեղանին է դրվում օսմաներենի՝ հայաստանյան իրականության մեջ առաջին բուհական դասագիրքը: Այն ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և թյուրքագիտության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակ-իցների բազմամյա համագործակցության արգասիքն է:

Թուրքերենը և օսմաներենը ԵՊՀ-ում դասավանդվել են 1940-ական թվականներից՝ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի նախաձեռնությամբ: Անուրանալի է ականավոր հայ օսմանագետ-աղբյուրագետներ Արամ Սաֆրաստյանի (1888-1966 թթ.), պրոֆ. Հակոբ Փափազյանի (1919-1997 թթ.), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի բազմամյա գիտաշխատող Ավետիս Փափազյանի, վաստակաշատ թուրքագետ, գրող, հրապարակախոս Խաչիկ Ամիրյանի գիտամանկավարժական ավանդը: Միաժամանակ փաստ է, որ օսմաներենի դասավանդման համար օգտագործվել են Թուրքիայում կամ Ռուսաստանում տպագրված դասագրքեր և բառարաններ: Գրախոսվող գրքում ներկայացված են օսմաներենի քերականական իրողությունների հայերեն համարժեքները (որոնք չկան ռուսերենում կամ անգլերենում), համահեղինակները հաշվի են առել հայ ուսանողներին օսմաներեն և թուրքերեն դասավանդելու առանձնահատկությունները: Դասագիրքը բաղկացած է երեսուներկու դասից, յուրաքանչյուրում լուսաբանվում են օսմաներենի բառագիտության, հնչյունաբանության և քերականության հարցերը, ներառված են տարբեր դարաշրջանների տարաբնույթ տեքստեր (այդ թվում՝ արձակ և չափածո ստեղծագործությունների բնագրային օրինակներ), վարժություններ, օսմաներեն-հայերեն ուսումնական բառարան, ինչպես նաև օսմաներենի և հայ օսմանագիտության պատմության համառոտ ակնարկ ամփոփող ներածություն:

Հարկ է հավելել, որ համալսարանական արևելագետների կողմից անկախ պետականության քառորդ դարի ընթացքում հիրավի զգալի աշխատանք է տարվել թուրքերենի, պարսկերենի, արաբերենի, աղրբեջաներենի, եբրայերենի, ասորերենի դասագրքերի ստեղծման և արևելյան լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման ուղղությամբ: Կարծում ենք՝ գրախոսվող դասագրքի լույսընծայումը ևս խթան կհանդիսանա հայաստանյան օսմանագիտության հետագա զարգացման համար:

ՄԵԼԻՔՅԱՆ Գ. Վ.
Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Ա. Ս.
Պատմական գիտությունների թեկնածու